




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

16906

7

361

7-79

1925

## ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ԿԻՐԱԿԻ

6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1925

## ԿՈՋ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ներկայ տարւոյ Դեկտեմբերի 6 ի Կիրակին, նախորդ տարիներու նման, պիտի յատկացուի յօգուտ հայ որբերու նուիրահաւաքութեան զործին:

Ինչպէս յայտնի է, այս ձեռնարկին նպատակը կրկին է. նախ հրաւիրել բոլոր դիւրակեցիկ ընտանիքները, որ այդ օրուան ճախ սեղանէն կամովին զրկելով ինքզինքնին, որբերու յատուկ պարզ ճաշ մը ընեն եւ այդ կերպով զոյացած խնայողութիւնը յատկացնեն որբերուն, եւ երկրորդը, թելադրել որ բաղդին շնորհները վայելող մեր ազգակիցները իրենց խղճին խորը իջնեն այդ օրը, մտածեն մարդասիրութեան, եղբայրութեան գերագոյն զգացումներուն վրայ եւ կատարեն իրենց պարտականութիւնը ազգին սաներուն հանդէպ:

Այս տարի Ամերիկացիները, այդ օրը շատ խորհրդանշական անունով մը մկրտած են, զայն հռչակելով «ԱՆՏԵՍՍՆԵԼԻ ՀԻՒՐ» ի կիրակին, այնպէս նկատելով որ այդ կիրակի իրենց սեղանակից ունին որքը՝ իբր անտեսանելի հիւր:

Իսկ մենք հայերս, հայ որբը մեզի սեղանակից պիտի ունենանք ոչ թէ իբր «ԱՆՏԵՍՍՆԵԼԻ ՀԻՒՐ», այլ իբր «ԱՆՏԵՍՍՆԵԼԻ ՍԻՐԵԼԻ» մը, զոր պիտի նստեցնենք մեր սիրասուն զաւակներուն հետ՝ քով քովի, խորհելով թէ որբը օտարներուն համար հիւր մըն է, սակայն մեզի համար ՍԻՐԵԼԻ մըն է տարուան բոլոր օրերուն մէջ:

Լիայոյս ենք թէ, այս զեղեցիկ զգացումներով առաջնորդուած, բարեսէր հայ ժողովուրդը, առանց յարանուանական կամ դատակարգի խտրութեան, պիտի նուիրուի այս զաւախարին եւ իր սրտաբուխ նուէրներով պիտի սատարէ հայ որբերու ապրուստի եւ կրթութեան նուիրական զործին:

Այս ձեռնարկին գլուխը կանգնելու են Բարեգործական Միութեան Մասնաճիւղերը. իսկ ուր որ այդպիսի մասնաճիւղ չկայ, ազգային մարմինները եւ կամ ո եւ է բարեսէր անհատ: Հաւաքուած նուէրները պէտք է ղրկուին Բարիչի Կեդր. Ժողովին կամ Գահիրէի Գործադիր Ժողովին:

Ապահով ենք թէ, երբ օտարները պարտականութիւն կը համարեն օգնել հայ որբին, հայերուս համար այդ պարտականութիւնը պէտք է ըլլայ նուիրական:



ՊԵՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Բարից, 13 Նոյեմբեր 1925

53027-ահ

2002

2010



12013

ՀՀ Ազգային գրադարան

16706



NL0050303

